

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՒՄ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ռումինիայի կառավարությունը, այսուհետև՝ Պայմանավորվող կողմեր,

հաշվի առնելով, որ մաքսային իրավախախտումները վնաս են հասցնում իրենց տնտեսական, առևտրային, ֆինանսական, սոցիալական և մշակութային շահերին,

հաշվի առնելով ապրանքների ներմուծման և արտահանման դեպքում գանձվող մաքսային տուրքերի, հարկերի և այլ վճարումների ու մուծումների ճիշտ գանձման, ինչպես նաև արգելման, սահմանափակման և հսկողության միջոցառումների պատշաճ կիրառման կարևորությունը,

համոզված լինելով, որ մաքսային իրավախախտումների դեմ ուղղված գործողություններն ավելի արդյունավետ կլինեն Պայմանավորվող կողմերի մաքսային ծառայությունների սերտ համագործակցության դեպքում,

մտահոգված լինելով թմրադեղերի, հոգեներգործող միջոցների ապօրինի փոխադրման մասշտաբներով և աճի միտումներով, հաշվի առնելով, որ դրանք վտանգավոր են բնակչության առողջության և հասարակության համար,

հիմնվելով նաև Համաշխարհային մաքսային կազմակերպության Հանձնարարականների, ինչպես նաև Պայմանավորվող կողմերի համար գործող և երկկողմանի փոխադարձ օգնությունը խրախուսող համապատասխան միջազգային կոնվենցիաների դրույթների վրա,

պայմանավորվեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Սահմանումներ

Սույն Համաձայնագրի նպատակների համար կիրառվող հասկացությունները նշանակում են.

- «մաքսային ծառայություն» յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի համար նշանակում է՝ Հայաստանի Հանրապետության համար - Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե,
- Ռումինիայի համար - Ռումինիայի ֆինանսների նախարարության գլխավոր մաքսային տնօրինություն,
- «մաքսային օրենսդրություն» նշանակում է՝ ապրանքների ներմուծման, արտահանման կամ տարանցման համար գործող նորմատիվ ակտերի դրույթներ կամ ցանկացած այլ մաքսային ընթացակարգ՝ այսպես թե այնպես կապված մաքսային ծառայությունների կողմից գանձվող մաքսային տուրքերի, հարկերի և ցանկացած այլ վճարումների կամ մաքսային ծառայությունների կողմից կիրարկվող՝ արգելման, սահմանափակման և հսկողության միջոցառումների հետ,
- «մաքսային իրավախախտումներ» նշանակում է՝ մաքսային օրենսդրության ցանկացած խախտում, ինչպես նաև մաքսային օրենսդրության խախտման ցանկացած փորձ, ինչպես շարադրված է Պայմանավորվող կողմերի պետությունների ներպետական օրենքներում,
- «հայցող Պայմանավորվող կողմ» նշանակում է՝ մաքսային ծառայություն, որը կատարում է օգնության մասին հարցում,

- «հայցվող Պայմանավորվող կողմ» նշանակում է՝ մաքսային ծառայություն, որին ուղղվում է օգնության հարցումը,
- «թմրադեղեր» նշանակում է՝ 1961թ. մարտի 30-ին Նյու Յորքում ընդունված «Թմրադեղերի մասին» կոնվենցիայի 1-ին և 2-րդ ցանկերում (համապատասխան փոփոխություններով հանդերձ) ընդգրկված որևէ նյութ՝ բնական կամ սինթետիկ ծագում ունեցող,
- «հոգեներգործող նյութեր» նշանակում է՝ 1971թ. փետրվարի 21-ին Վիեննայում Միավորված ազգերի կազմակերպության հովանավորությամբ մշակված «Հոգեներգործող նյութերի մասին» կոնվենցիայի 1-ին, 2-րդ, 3-րդ ցանկերում ընդգրկված որևէ նյութ՝ բնական կամ սինթետիկ ծագում ունեցող,
- «սկզբնանյութեր» նշանակում է՝ 1988թ. դեկտեմբերի 20-ին Վիեննայում ընդունված «Թմրադեղերի և հոգեներգործող նյութերի ապօրինի փոխադրման դեմ» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի 1-ին և 2-րդ ցանկերում ընդգրկված՝ թմրադեղերի և հոգեներգործուն նյութերի արտադրության ժամանակ հսկողության տակ օգտագործվող քիմիական նյութեր,
- «վերահսկելի մատակարարում» նշանակում է՝ մեկ կամ մի քանի երկրների տարածքներից արտահանվող, տարածքներով անցնող կամ տարածքներ ներմուծվող, իրենց իրավասու մարմինների իրազեկ լինելու պայմաններում ապօրինի առաքման կամ ապօրինի առաքման մեջ կասկածվող թմրադեղերի, հոգեներգործող նյութերի և սկզբնանյութերի կամ դրանց փոխարինող նյութերի նկատմամբ, ինչպես նաև օրինազանցությունների մեջ կասկածվող անձանց հայտնաբերման նպատակով կիրառվող միջոցներ:

ՀՈԴՎԱԾ 2

Համաձայնագրի գործողության ոլորտը

1. Սույն Համաձայնագրում նշված դրույթներին համապատասխան՝ Պայմանավորվող կողմերը միմյանց կօգնեն՝ ապահովելու համար մաքսային օրենսդրությամբ սահմանված հետևյալ հսկողությունը.

ա) կծեռնարկեն անհրաժեշտ միջոցառումներ ապրանքների և ուղևորների փոխադրումները հեշտացնելու և պարզելու համար,

բ) կհամագործակցեն և կօգնեն միմյանց՝ կանխարգելելու և հետաքննելու մաքսային օրենսդրության դեմ ուղղված իրավախախտումները,

գ) հարցման հիման վրա կտրամադրեն մաքսային օրենսդրության կիրարկման համար անհրաժեշտ այլ տեղեկատվություն,

դ) կփորձեն համագործակցել նոր մաքսային ընթացակարգերի ուսումնասիրության, զարգացման և կիրառման, անձնակազմի պատրաստման և փոխանակման, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերում:

2. Սույն Համաձայնագրի շրջանակներում փոխադարձ օգնությունը կտրամադրվի հայցվող Պայմանավորվող կողմի պետության տարածքում գործող օրենսդրության համաձայն և մաքսային ծառայությունների իրավասությունների և հնարավորությունների սահմաններում:

ՀՈԴՎԱԾ 3

Անձանց, ապրանքների և փոխադրամիջոցների նկատմամբ հսկողություն

Մաքսային ծառայությունները իրենց սեփական նախաձեռնությամբ կամ հարցման հիման վրա կիրականացնեն հսկողություն.

ա) այն անձանց նկատմամբ, որոնց ինքնությունը անհրաժեշտ է պարզել, կամ որոնք կասկածվում են մաքսային իրավախախտումներում կամ ներգրավված են թմրադեղերի, հոգեմեդրոդոլ նյութերի և սկզբնանյութերի ապօրինի փոխադրման մեջ,

բ) այն ապրանքների նկատմամբ, որոնք հայտնի են կամ կասկածվում են մաքսային իրավախախտումների իրականացման ժամանակ օգտագործման կամ թմրամիջոցների, հոգեմեդրոդոլ նյութերի և սկզբնանյութերի ապօրինի փոխադրման նպատակով օգտագործման մեջ,

գ) ցանկացած փոխադրամիջոցի նկատմամբ, որը հայտնի է կամ կասկածվում է մաքսային իրավախախտումների ժամանակ օգտագործման կամ թմրադեղերի, հոգեմեդրոդոլ նյութերի և սկզբնանյութերի ապօրինի փոխադրման նպատակով օգտագործման մեջ,

դ) փոստային ծանրոցների նկատմամբ, որոնք կասկածվում են ապրանքների ապօրինի փոխադրումներում օգտագործման մեջ:

ՀՈԴՎԱԾ 4

Գործողություններ խիստ ներգործող ապրանքների ապօրինի փոխադրման դեմ

Մաքսային ծառայությունները իրենց նախաձեռնությամբ կամ հարցման հիման վրա փոխադարձաբար կտրամադրեն միմյանց համապատասխան տեղեկատվություն Պայմանավորվող կողմերից մեկի պետության տարածքում գործող մաքսային օրենսդրության դեմ ուղղված իրավախախտում կատարած կամ կատարելու որևէ մտադրություն ունեցող որևէ անձի վերաբերյալ, այսինքն՝

ա) թմրադեղերի, հոգեմեդրոդոլ նյութերի և սկզբնանյութերի փոխադրում,

բ) զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ և ատոմային նյութերի, ինչպես նաև շրջակա միջավայրի և բնակչության առողջության համար վտանգավոր այլ նյութերի փոխադրում,

գ) պատմական, մշակութային կամ հնագիտական արժեք ունեցող արվեստի աշխատանքների փոխադրում,

դ) մաքսային տուրքերի կամ հարկերի բարձր դրույքաչափերով հարկման ենթակա ապրանքների փոխադրում:

ՀՈԴՎԱԾ 5

Վերահսկելի մատակարարում

1. Մաքսային ծառայությունները իրենց իրավասությունների շրջանակներում կհամագործակցեն վերահսկելի մատակարարման մեթոդների իրագործման ոլորտներում:

2. Վերահսկելի մատակարարում կիրառելու մասին որոշումը կայացվում է «դեպքից դեպք» սկզբունքով՝ Պայմանավորվող կողմերի պետությունների տարածքներում գործող օրենսդրությանը համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 6

Տեղեկատվության փոխանակում

1. Մաքսային ծառայությունները իրենց սեփական նախաձեռնությամբ կամ հարցման հիման վրա միմյանց կտրամադրեն ցանկացած տեղեկատվություն, որը կարող է օգնել ընթացակարգերի ավելի արդյունավետ իրագործմանը, և որոնք վերաբերում են.

ա) ապրանքների ներմուծման և արտահանման ժամանակ մաքսային արժեքների որոշմանը և ներկայացվող փաստաթղթերի հավաստիությանը, ինչպես նաև դրանցում պարունակվող ժամկետի իսկությանը,

բ) արտաքին տնտեսական գործունեության հետ կապված ապրանքների՝ ըստ մաքսային սակագների դասակարգմանը, ինչպես նաև, ըստ նրանց անվանումների, ապրանքների սակագնային դասակարգման նպատակով լաբորատորիաներում հետազոտությունների կատարմանը,

գ) ապրանքների ծագման որոշմանը և արտահանման ժամանակ ներկայացվող ծագման հավաստագրերի նկատմամբ իրականացվող հսկողությանը, ինչպես նաև արտահանող երկրում ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսային ընթացակարգերին (տարանցումը մաքսային հսկողության ներքո, մաքսային պահեստներ, ժամանակավոր մուտք, ազատ առևտրի գոտիներ, արտահանում երկրի ներսում վերամշակելուց հետո և այլն):

2. Մաքսային ծառայությունները հարցման հիման վրա կտրամադրեն միմյանց հետևյալ տեղեկատվությունը.

ա) Պայմանավորվող կողմերից մեկի պետության տարածք ներմուծվող այն ապրանքների մասին, որոնք օրինական կերպով արտահանվել են մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքից,

բ) Պայմանավորվող կողմերից մեկի պետության տարածքից արտահանվող այն ապրանքների մասին, որոնք օրինական կերպով ներմուծվել են մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածք:

3. Մաքսային ծառայությունները իրենց սեփական նախաձեռնությամբ կան հարցման հիման վրա միմյանց կտրամադրեն ցանկացած տեղեկատվություն երկու պետությունների տարածքներում գործող մաքսային օրենսդրություններով սահմանված իրավախախտումների վերաբերյալ և, մասնավորապես, տեղեկատվություն, որը վերաբերում է.

ա) ֆիզիկական և իրավաբանական անձանց, որոնք հայտնի են կամ կասկածվում են մաքսային իրավախախտումների կատարման մեջ կամ ներգրավված են թմրադեղերի, հոգեներգործող նյութերի և սկզբնանյութերի ապօրինի փոխադրման մեջ,

բ) ապրանքներին, որոնք հայտնի են կամ կասկածվում են մաքսային իրավախախտումների առարկա լինելու մեջ կամ կապված են թմրադեղերի, հոգեներգործող նյութերի և սկզբնանյութերի ապօրինի փոխադրման հետ,

գ) փոխադրամիջոցներին, որոնք հայտնի են կամ կասկածվում են մաքսային իրավախախտումների ժամանակ օգտագործման կամ թմրադեղերի, հոգեներգործող նյութերի և սկզբնանյութերի ապօրինի փոխադրման մեջ:

4. Եթե հայցվող մաքսային ծառայությունը չի տիրապետում պահանջվող տեղեկատվությանը, իր իրավասությունների և հնարավորությունների սահմաններում նա այդ տեղեկատվությունը ստանալու համար կձեռնարկի անհրաժեշտ միջոցառումներ՝ այնպես, ինչպես կգործեր իր շահերից ելնելով և համաձայն իր պետության տարածքում գործող օրենսդրության:

5. Պայմանավորվող կողմի մաքսային ծառայությունը իր սեփական նախաձեռնությամբ կան հարցման հիման վրա մյուս Պայմանավորվող կողմի մաքսային ծառայությանը կտրամադրի մաքսային փաստաթղթեր, բեռնափոխադրման փաստաթղթեր, վկայությունների արձանագրություններ և դրանց վավերացված պատճենները, ինչպես նաև տեղեկատվություն կատարված կամ նախատեսվող գործողությունների մասին, որոնք հավաստում են կամ կարող են հավաստել մյուս պետության տարածքում գործող օրենսդրության դեմ ուղղված իրավախախտումների մասին:

6. Մյուս Պայմանավորվող կողմի մաքսային ծառայությանը տրամադրվող տեղեկատվությունը կարող է փոխանցվել ցանկացած էլեկտրոնային միջոցի օգնությամբ՝

սույն Համաձայնագրում նշված փաստաթղթերի փոխարեն: Այն կպարունակի անհրաժեշտ բացատրություններ՝ այդ տեղեկատվությունը մեկնաբանելու և օգտագործելու համար:

ՀՈԴՎԱԾ 7

Օգնության վերաբերյալ հարցումների ձևը և բովանդակությունը

1. Սույն Համաձայնագրին համաձայն՝ հարցումները պետք է կատարվեն գրավոր: Հարցումները պետք է պարունակեն դրանց իրականացման համար անհրաժեշտ հավելվածներ: Բացառիկ դեպքերում հարցումները կարող են կատարվել բանավոր, սակայն դրանք պետք է անմիջապես հաստատվեն գրավոր:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված հարցումները պետք է պարունակեն հետևյալ տեղեկությունները՝

ա) հարցում կատարող մաքսային ծառայության անվանումը,

բ) պահանջվող միջոցառումները,

գ) առարկան և հարցման պատճառները,

դ) հարցման առարկայի հետ կապված օրենքները և այլ իրավական ակտերը,

ե) հետաքննության մեջ ներգրավված ֆիզիկական և իրավաբանական անձանց վերաբերյալ առավել հստակ և մանրամասն տվյալները,

զ) հարցման առարկայի մասին համապատասխան փաստերի ամփոփ տեղեկատվություն:

3. Հարցումները պետք է ներկայացվեն հայցվող Պայմանավորվող կողմի պետության պաշտոնական լեզվով, անգլերեն կամ ֆրանսերեն:

4. Եթե հարցումը չի բավարարում սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի պահանջները, կպահանջվի հարցման փոփոխում:

ՀՈԴՎԱԾ 8

Մաքսային հետաքննություններ

1. Պայմանավորվող կողմերից մեկի մաքսային ծառայության հարցման դեպքում մյուս Պայմանավորվող կողմի մաքսային ծառայությունը կձեռնարկի հետաքննություն այն գործողությունների նկատմամբ, որոնք խախտում են կամ կարող են խախտել հայցող Պայմանավորվող կողմի պետության տարածքում գործող մաքսային օրենսդրությունը: Հետաքննության արդյունքները կներկայացվեն հայցվող Պայմանավորվող կողմին:

2. Այդպիսի հետաքննությունները կկատարվեն հայցվող Պայմանավորվող կողմի պետության տարածքում գործող օրենսդրության համաձայն: Հայցվող Պայմանավորվող կողմը կգործի այնպես, ինչպես նա կգործեր իր շահերից ելնելով:

3. Պայմանավորվող կողմի մաքսային ծառայության պաշտոնատար անձինք կարող են առանձնահատուկ դեպքերում մյուս Պայմանավորվող կողմի մաքսային ծառայության համաձայնությանը ներկա գտնվել վերջինիս պետության տարածքում տվյալ պետության մաքսային օրենսդրության իրավախախտումների հետաքննության ժամանակ: Նրանք պետք է հաստատեն իրենց պաշտոնական իրավասությունը:

4. Հայցվող Պայմանավորվող կողմի պետության տարածքում 3-րդ կետին համապատասխան գտնվող հայցող Պայմանավորվող կողմի պաշտոնատար անձը կարող է գործել միայն խորհրդակցական լիազորություններով և ոչ մի դեպքում չի մասնակցի հետաքննությանը ակտիվ ձևով, չի հանդիպի հարցաքննվող անձանց հետ, ինչպես նաև չի ընդգրկվի որևէ հետաքննչական գործունեության մեջ:

ՀՈԴՎԱԾ 9

Տեղեկատվության և փաստաթղթերի օգտագործումը

1. Սույն Համաձայնագրի շրջանակներում ստացված տեղեկատվությունը, փաստաթղթերը և տվյալները չեն կարող օգտագործվել այն նպատակների համար, որոնք նշված չեն սույն Համաձայնագրում: Դրանք կարող են օգտագործվել այլ նպատակներով միմիայն դրանք ներկայացնող մաքսային ծառայության գրավոր համաձայնության դեպքում:

2. Թմրադեղերի, հոգեներգործող նյութերի և սկզբնանյութերի ապօրինի փոխադրմանը վերաբերող տեղեկատվությունը և փաստաթղթերը կարող են նաև ուղարկվել Պայմանավորվող կողմերի պետությունների այլ կառավարական մարմիններին, որոնց գործունեությունը ներառում է դեղամիջոցների չարաշահման և թմրադեղերի, հոգեներգործող նյութերի և սկզբնանյութերի ապօրինի փոխադրման հսկողությունը:

3. Սույն Համաձայնագրին համապատասխան կատարված ցանկացած հարցում և ցանկացած ձևով ուղարկված տեղեկատվություն կունենան գաղտնի բնույթ: Նմանատիպ տեղեկատվության և փաստաթղթերի նկատմամբ ապահովվող գաղտնիությունը և պաշտպանվածությունը հետագայում կշարունակվեն հայցվող Պայմանավորվող կողմի պետության տարածքում գործող օրենսդրության համաձայն:

4. Մաքսային ծառայություններին սույն Համաձայնագրին համապատասխան տրամադրված տեղեկատվությունը և փաստաթղթերը, կախված իրենց նպատակներից և ոլորտներից, կարող են օգտագործվել որպես փաստեր վարչական և դատական գործընթացների ժամանակ:

5. Նման փաստաթղթերը և տեղեկատվությունը կարող են օգտագործվել դատարանում փաստեր ներկայացնելիս, և դրանց իրավական կարգավիճակը կորոշվի ստացող Պայմանավորվող կողմի պետության տարածքում գործող ազգային օրենսդրության համաձայն:

ՀՈԴՎԱԾ 10

Փորձագետներ և վկաներ

1. Հարցման հիման վրա հայցվող Պայմանավորվող կողմը կարող է լիազորել պաշտոնատար անձանց, իրենց համաձայնության դեպքում, փորձագետի կամ հայցող Պայմանավորվող կողմի իրավական և վարչական մարմիններում վկայի իրավասությամբ: Այդպիսի պաշտոնատար անձինք կներկայացնեն իրենց պարտականությունների իրականացման ժամանակ ձեռք բերված փաստերը:

2. Հայցող մաքսային ծառայությունը պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները, սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան, իր պետության տարածքում գտնվելու ընթացքում պաշտոնատար անձանց անվտանգությունը երաշխավորելու համար:

3. Այդ պաշտոնատար անձանց ներկայանալու համար հարցումը պետք է ներառի դեպքի մանրամասն նկարագրությունը և սահմանի պաշտոնատար անձանց ներկայանալու կարգավիճակը:

4. Մաքսային պաշտոնատար անձանց որպես փորձագետ և վկա ներկայանալու հարցումը պետք է կատարվի հայցվող Պայմանավորվող կողմի պետության օրենսդրության համաձայն:

ՀՈՂՎԱԾ 11

Բացառություններ օգնություն ցուցաբերելու պարտավորությունից

1. Եթե հայցվող Պայմանավորվող կողմը գտնում է, որ համապատասխան հարցման կատարումը կվնասի իր պետության անկախությանը, անվտանգությանը կամ ցանկացած այլ շահի, ապա նա կարող է հրաժարվել սույն Համաձայնագրի համաձայն ամբողջությամբ կամ մասամբ պահանջվող օգնություն տրամադրելուց կամ էլ ցուցաբերել պահանջվող օգնությունը՝ որոշակի հանգամանքներից ելնելով:

2. Եթե հայցող Պայմանավորվող կողմը հայցում է օգնություն, որն ինքը չի կարող տրամադրել մյուս Պայմանավորվող կողմի մաքսային ծառայությանը, այդ փաստը պետք է նշվի հարցման մեջ: Այդպիսի հարցումը կկատարվի հայցվող Պայմանավորվող կողմի հայեցողությամբ:

3. Եթե օգնությունը մերժվում է, ապա մերժման պատճառները առանց հետաձգման գրավոր կծանուցվեն հայցող Պայմանավորվող կողմին:

ՀՈՂՎԱԾ 12

Մաքսային ընթացակարգերի պարզեցումը

Փոխադարձ համաձայնության հիման վրա Մաքսային ծառայությունները կծեռնարկեն անհրաժեշտ միջոցառումներ մաքսային արարողակարգերը պարզեցնելու համար՝ Պայմանավորվող կողմերի պետությունների տարածքների միջև ապրանքների տեղափոխումը հեշտացնելու և օժանդակելու նպատակով:

ՀՈՂՎԱԾ 13

Տեխնիկական օգնություն

Մաքսային ծառայությունները կարող են միմյանց տրամադրել մաքսային գործերում տեխնիկական օգնություն հետևյալ ձևերով՝

ա) մաքսային պաշտոնատար անձանց փոխանակում՝ օգտագործվող մաքսային վերահսկողության առաջադեմ միջոցներին ծանոթացնելու նպատակով,

բ) տեղեկատվության և փորձի փոխանակում հսկողության համար օգտագործվող տեխնիկական սարքավորումների վերաբերյալ,

գ) մաքսային պաշտոնատար անձանց պատրաստում և վերապատրաստում,

դ) մաքսային գործերում փորձագետների փոխանակում,

ե) մաքսային դրույթների կիրառման հետ կապված առանձնահատուկ, գիտական և տեխնիկական տվյալների փոխանակում:

ՀՈՂՎԱԾ 14

Ծախսեր

Պայմանավորվող կողմերը կհրաժարվեն սույն Համաձայնագրի համաձայն ծագող՝ միմյանց նկատմամբ ծախսերի փոխհատուցման պահանջներից, բացառությամբ պետական ծառայության հետ կապ չունեցող փորձագետների և վկաների, մեկնաբանների և թարգմանիչների համար կատարված ծախսերի:

ՀՈՂՎԱԾ 15

Համաձայնագրի կատարումը

1. Սույն Համաձայնագրով նախատեսված համագործակցությունը և փոխադարձ օգնությունը կցուցաբերվի Պայմանավորվող կողմերի մաքսային ծառայությունների

կողմից: Այդ մարմինները փոխադարձ համաձայնության կգան այդ նպատակով օգտագործվող փաստաթղթային հիմնավորման վերաբերյալ:

2. Պայմանավորվող կողմերի ծառայությունների ներկայացուցիչները անհրաժեշտության դեպքում կհանդիպեն առնվազն տարին մեկ անգամ՝ հաջորդաբար երկու պետություններում, սույն Համաձայնագրի դրույթների կատարման վերլուծության և Պայմանավորվող կողմերի մաքսային ծառայությունների համագործակցության ու փոխադարձ օգնության այլ գործնական խնդիրների լուծման նպատակով:

3. Պայմանավորվող կողմերի մաքսային ծառայությունները միասին կորոշեն սույն Համաձայնագրի գործնական կիրառման մեթոդները:

4. Սույն Համաձայնագրի նպատակների համար Պայմանավորվող կողմերի մաքսային ծառայությունները կնշանակեն փոխադարձ կապ ապահովող պաշտոնատար անձանց և կփոխանակեն այդ անձանց անունները, պաշտոնները, հեռախոսի և ֆաքսի համարները պարունակող ցուցակներ: Նրանք կարող են նաև ներգրավել իրենց հետաքննչական ստորաբաժանումները՝ միմյանց հետ ուղիղ կապի մեջ լինելու համար:

ՀՈԴՎԱԾ 16

Վեճերի լուծումը

Սույն Համաձայնագրի կատարման և մեկնաբանման ընթացքում ծագող ցանկացած վեճ Պայմանավորվող կողմերի մաքսային ծառայությունների միջև կկարգավորվի խորհրդակցությունների միջոցով:

Այն վեճերը, որոնք չեն կարգավորվի մաքսային ծառայությունների միջև խորհրդակցությունների միջոցով, կլուծվեն դիվանագիտական ուղիներով:

ՀՈԴՎԱԾ 17

Ուժի մեջ մտնելը

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի 30 օր հետո վերջին ծանուցման ստացման օրվանից, որով Պայմանավորվող կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց կտեղեկացնեն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար ներպետական իրավական պահանջների կատարման մասին:

2. Սույն Համաձայնագիրը կնքվում է 5 (հինգ) տարով և ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդող մեկ տարվա ժամանակահատվածներով:

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է դադարեցնել Համաձայնագիրը դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին հասցեագրված ծանուցման միջոցով: Համաձայնագրի գործողությունը կդադարի համապատասխան ծանուցում ստանալուց երեք ամիս հետո:

Կատարված է Երևանում 2001թ. հոկտեմբերի 31-ին՝ երկու բնօրինակով, հայերեն, ռուսերեն և անգլերեն, ընդ որում բոլոր օրինակները հավասարազոր են: Ռումիներեն և հայերեն տեքստերի մեկնաբանման ժամանակ անհամապատասխանության դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**

**ՌՈՒՄԻՆԻԱՅԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**